



Պատասխանատու
Հովհաննէս Փիլիպեան

ՕՐԱԳԻՐ ԶՄԻՌՆԵՒՈՅ

Նամակըն ուղղելի են
առ. Ղ. Գ. Պալլադարեան

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՌՐԻ ԻՆՆԵՐՐՐԻ ՏԱՐԻ ԶՄԻՌՆԵՒՈՅ ԵԱԲԱԹ 23 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1878 ԹԻԻ 1108

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Քաղաքական վերջին դարձումները ընդհանուր խաղաղութեան վերահաստատութեան ապագայը կը համարեն։ Երկու գլխաւոր տէրութիւնք Ռուսիա և Անգլիա, որ աշխարհի քաղաքական տեսարանիս մէջ առաջին դերասաններն են, իրարու մտեցած են, և կը կարծուի որ այս անգամ դոնէ անկեղծ են Ռուսիոյ ջախջախումը խոստումները և իւր բաղձանքը ի մասին հաստատ պահելու խաղաղութիւնը և կեանք և կեանք կատարելու Բերլինեան Առաջաժողովոյ դաշնագիրը։

Խաղաղութիւնը հաստատութիւն գտնելուն մեծ նշան կը համարի Աֆղանական խնդրոյն ի նպատակ Անգլիոյ լուծուիլը, որ իսկիցան այնքան Թերկիզներ տուած էր, մինչև անգամ Անգլիոյ Թերկիզի քաղաքացիները յուղման և տալիսութեան մէջ թողուցած։ Այսօր կատարեալ գործ մի է Անգլիացւոյ տարած յաղթութիւնը։ Երբ Այն, առանց իսկ համարձակելոյ փորձել Բոսնիոյ դորապետին նուիրած յաղթապանք սուրը, մէկդի թողլով զայն, փութաց անկախիլ նուիրատու ազգին դրկին մէջ ի Թուրքաստան, յանձնելով կառավարութիւնը իւր օգուայն Եսպոսկ խանին որ ի բանտի կը մնայր, և աղաւելով՝ անմիջապէս սկսու բաժանել Անգլիացւոյ հետ, որոնք արդէն մտած էին ի Զէլլապատ, և կը կարծուի թէ մինչև ջարդը հաշտութեան պայմաններն կը քուած լինին։ Քրհաստատեն թէ յիշեալ իշխանը իւր հըպատակութիւնը վեհ Թագուհւոյն անձամբ մատուցանելու համար մտադիր է Անգլիա դնալ։

Այսպէս կը վերջանայ սոյն խնդիրը, որ պատմութեան մէջ իւր յատուկ տեղը պիտի ունենայ, և օգտակար դաս մի լինելով այն փոքրիկ

տէրութեանց, որոնք փոխանակ իրենց ներքին զօրութեան փտահելոյ, օտար իշխանութեան վերայ՝ թէ և զօրագոյն կուրօրէն կը ընեն իւր կորուսանէ իւր անկախութիւնը, իւր պատիւը և իւր սուրը։

Եւրոպական լրագիրք կը ծանուցանեն թէ Ռուսիոյ կառավարութիւնը ուղած լինի Աֆղանական խնդրոյն միջամտել հաշտութեան համար բանակեցելով, և որոշել երկուց հզոր տէրութեանց կեդրոնական Ասիոյ մէջ ունենալիք «չիտական սահմանները»։ սոյն որոշումը երբ և է պէտք է որ լինի, և թէ արդէն իսկ եղած չէ միայն թէ Աֆղանիստանի կառավարութիւնը պիտի լինի իւր հարկատու իշխանութիւն (vassal) Անգլիոյ, մասն չունելով բնաւ անոր մէջ Ռուսիոյ, ինչպէս ասած է լորտ կրանպուրք. «Երբ րանական Ասիոյ մէջ թէ Ռուսաց և թէ Անգլիացւոյ տեղ կայ, բայց երկուսին համար Աֆղանիստանի մէջ տեղ չկայ»։ Նոյնը կը կրկնեն նաև երեսփոխանաց մեծագոյն մասը և ազատականաց կուսակցութիւնը, որոց մէջ եղած կարծեաց տարբերութիւնը չնչին բան մի է. իսկ ամենքը միասին կը ցաւին Ռուսիոյ կառավարութեան բռնած խեղաթիւր բնթացիցը ոչ միայն կեդրոնական Ասիոյ մէջ, այլև եւրոպական Թուրքիոյ, մանաւանդ Արևելեան Բուլղարիոյ մէջ, զոր կը ճգնի միացնել Բուլղարիոյ հետ, և արդէն համաձայնած է իրեն նաև Գերմանական դաշինքը, որ կ'ուզէ համընդ Անգլիոյ հաճութիւն տալ միաւորութեան խնդրոյն։

Հելլենական խնդիրն ևս իւր վախճանին հասած կը համարի։ Վեհ Սուլթանը հաստատելով յանձնաժողովոյ պաշտօնը, արդէն մեկնած են յԱթէնս, այն է կաղի Մուխթար փաշայ, վահան էֆէնտի և Ապետտին—Պէյ. իսկ հելլենական կառավարութեան կողմէ որոշուած են Պ

Պ. Սապունճազի, վարդինոս, և Ֆուդուքիս։ Կը յուսացուի թէ սոյն կնճառտ խնդիրը քիչ ժամանակէն կ'ուծուի կատարեալ հաճութեամբ երկուց կողմանց։

Նովի—Բաղարի դրաման խնդիրն ևս խաղաղութեամբ լուծուած կը կարծուի։ Սուլթանը իւր յատուկ իրաւունքով վաւերացուցած է երկու տէրութեանց մէջ որոշուած կարգադրութիւնը, յորում անկիսա պիտի մնայ իւր վեհապետական իրաւունքը։

ԱԶԳԱՅԻՆ

Ամսոյս 13ին տեղի ունեցաւ Ի. Գ. Նիստը դաւառական ժողովոյ։ Այս անգամ հրաւիրագիրը չըջարեալական թուղթ մի էր, յորում պէտք էր ստորագրուէին ներկայ գտնուելոյ համար հաստատ դիտաւորութիւն ունեցող երեսփոխանք. օրակարգը նշանակուած էր միմիայն ժառանգական տրոց մասին եղած խնդիրը և մի քանի ուրիշ խնդիրներ, որոնք նշանակուած չէին ինչ լինիլը։

Ատեանք բացուեցաւ փոխատենապետ Թէս. տէրէճեան էֆէնտիի մէկ առաջարկով, որով դանդաւտ կը յայտնէր Արշալուսոյ մէջ Յ. Միրզայեան էֆէնտիի յօդուածոյն մէջ կարծեցեալ մէկ սխալին դէմ, որ իւր պաշտօնին կը նկատէր։

Սարգիս էֆէնտի Պապիլէր, որուն դրեթէ Ժողովոյ մեծ մասն համամիտ էր, դիտաւորութիւնը բաւ փոխատենապետին թէ՛ այդպիսի անձնական անօգուտ խնդիրներով ժողովոյ թանկագին ժամերը չվատնենք, այլ միայն ազգին կարեւոր պիտոյից վերաբերեալ խնդրովք զբաղիմք. որուն վերայ բերաւ Ս. Առաջնորդն ալ թէ՛ այդպիսի դանդաւտներ ևս ալ ունիմք ընելու իմ անձին դէմ՝ ազգին մէջ տարածուած տարա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Քաղաքականութիւն Առաջնորդին Զորադատ
ի Զորադատ։

Զրկւ սորին պատիւ անձին համարի վայելել վիշտ ի համբաւ գոյոյ ջատագով մեծ և կողմնակալ կը զգարան դասուն, իմա ի բարձրագոյն աստիճանէ մինչև ի խոնարհ, մանաւանդ զի պատեհ կալաւ երբեմն երեւել ևս ի գրական հանդիսի, թէ պէտեւ ոչ կարի հմուտ և հզօր դրչաւ, որով պատմել կարիցէ ի պաշտպանութիւն ազատուոյ և իրաւանց նոյա։

Պորու յառաջ մի ի պարծանաց ազգայնոց աստէ, ընդ որոյ և ընդ իմոյս գաղափարաց և կարծեաց և սկզբանց երեւի կայանալանհատելի իմն անհամաձայնութիւն յատկապէս ի խնդիրս ազգայինս, ասաց ինձ ի վիճաբանութեան իմիք՝ եթէ կայր յիս շարժառիթ իմն (motive) ի պաշտպան հանդիսանալ յայնժամ կարի սխալական կը չի կրնայ այնոցիկ, և թէ՛ չունելով իւր ամենեւին զիւղթ՝ խօսէր ուղիղ և անախա զնոյանէ։ Իբրեւ այր աշխարհական ցուցանէր ունել ամենայն համարձակութիւն կը իրտիսել (քննադատել) զվարս և զբարոյս կրօնաւորաց և զիւրիք հնար էր նմա սխալել, կամ եթէ գոյր ևս սխալել, «նովին չափով» դատելոյ, որպէս նոքա ջուր ինքն դատէր։

Ոչ կարաց Պարոնն տալ ինձ զլուծումն եթէ առ ինչ առանձին շահու և յարաբերութեանց կանէր ինձ շարժառիթ զիւղմն ունելոյ քահանայից, ևս և ծայրագունից նոյա. այն զի

գիտէր զի և մեք և ընտանիք մեր և բարեկամք ամենայն ուրեք նոյնչափ էաք ինքնիշխան և ազատ, և անկարօտ օգնականութեան կամ չնորհաժութեանց այլոց, որչափ ինքն թերևս համարէր զինքն լինել, այն ինչ խոր ի քնին մտեալ մեր եւ սրտի եւ մտաց, ոչ գտանէաք զայլազգեցումն ի մէջ եթէ ոչ զգիտակցութիւն վիպելոյ իրաւանց և ճշմարտութեան, ոչ զայլ շարժումն՝ եթէ ոչ զազգափոխական համակրութիւնս ուր հարկ էր ունել, իբրեւ հանդէպ դային նիւթք ազգայինք կամ հասարակաց ի զրուցել կամ ի հետադարձ։

Հնարին իսկ է սոյն գաւառութեան մեր գալ ի յոյս և յապացոյց սովին իսկ դրուածով, այն է՝ զի չեմք մեք բնաւ կանխակալութեամբ իւր հակամիտեալ ի կողմն այս կամայն, ևս և բարձրատրիճան կը լինի, թէ պէտեւ չուրանամք՝ զի ունիմք միշտ յարգանս և մեծարանս առ ում ի նոյնոց վայել է ունել—այլեւր ժամանակ է խօսելոյ, զոր տեղեակք եմք—ուսեալ ի յադբերաց՝ զորոց արժանահաւատութենէ չունիմք տարակոյս—զայն խօսիմք, կամ զոր խղճի մտօք պարզ և անկեղծաւոր դատողութեամբ խորհիմք, զնոյն արտասանեմք։ Իսկ եթէ վրիպեալ դատնիմք յոր և է ի զինի յայտ եկեալ հանգամանաց ի կարծիս մեր, չտրջանամք՝ թէ համեմատութիւն մեր վրիպեցաւ թերևս ի չնորհս համեմատութեան և բարութեան, որչափ ապաշաւ լինիմք՝ եթէ յանցեալ էր մեր վառն անխորհուրդ և անհիմն ամբաստանութեանց զընկերս, որպէս արդարեւ վորձիւ և ստացուցութեամբ իրադեկ լինիմք բաղումանգամ վրիպակ և անարդար դատաստանաց, գործեալ մանաւանդ յայնցանէ որք

թուի թէ ուխտեցին զանձինս չհաւատալ ի լուել ինչ բարիս և ընտիրս զեկեղեցականաց մերոց, այլ հանապաղ կասկածել և թերահաւատել ի նոսա։ Իսկ ի մերմէ կողմանէ ոչ յիշեմք եթէ յոլով անգամ դիպեցաւ մեզ սխալութիւն դիտութեան կամ դատաստանի. այլ որպէս ի սկզբան, նոյն և ի վերջոյ, կամ յանցանել ժամանակաց չգտաք զպատճառ կամ զփաստ փոփոխելոյ զկարծիս մեր՝ մեծապէս տարբեր ընթացեալ յայլոց՝ որք ի տարապարտուց պարսաւէին ումմեք պաշտպանէաք՝ առանց ունելոյ «զարժառիթն», զոր ակնարկէր բարեկամմեր։

Վերոյին յառաջաբանութեամբ, որ յուսամք ներեսցի մեզ սիրով, մատուցուք այժմ ի բուն խնդիրն, որով գլխաւորեցուք զայս յօդուած։

Աւելի քան երեք ամբ անցին, յորմէ հետէ հրամանաւ Նորին վեհ. Սրբաշնութեան կաթողիկոսին ամենայն Հայոց, եթող զաթոռ իւր ի վառն սրբոյ Ամենափրկչեան Զուգայոյ՝ թեմակալ Առաջնորդ նորա բարձրապատիւ Գրիգորիս Արքեպիսկոպոս, դնալ ի Հնդկիս իբրեւ ծայրագոյն նուիրակ վեհապետին էլ վիպձնի։ Հարգեաց ընդ երանել իւր անտի ի փոխանորդ իւր՝ սովորական անուամբ յաջորդի, զիտաւորուր վարդապետն, զմիմիայն Միաբան ասայեալ վանաց, որոյ յերկար ամաց հետէ ոչ յաւելու թիւ միաբանացն առաւել քան զմի կամ զերկուս, թէ պէտեւ յառաջին ժամանակ պանծայր բաղմք։

Անտարակոյս առաջարկութիւն բացակայելոյ Առաջնորդին ի Զուգայէ հակառակ էր կամաց և օգտի ժողովրդեանն որում կարդեալն էր հօլուել, և որոց ի քաղաքական յարաբերութիւնս ընդ միահեծան Պետութեան Պարոնից

ճայնութեանց մասին, այսու ամենայնիւ եւ ներդրածիս կըլինիմ անոնց :

Պօղոս էֆէնտի Պերկամայեան խօսք ուղերով խնդիր բացաւ Աղքատասիրաց ընկերութեան ճշտեալական խորհրդոյ հետ ունեցած գրամական խնդրոյն վրայ : որոց մասին գիւտանի կողմէ գրուած մի նամակի մէջ գիտմամբ եղած սխալ մի նշմարած էր, և ուղեց ատենագրութիւնը աչքէ անցնելու : Դիւանը չուզելով մէջ բերել ատենագրութեան տուեալը, յանադ ցուցնել թէ՛ նամակին մէջ, գրուած թուականի սխալը ճիշտ էր ինչ որ որոշած էր այն մասին նոյն օրուան գաւառական ժողովոյ նիստը : Պերկամայեան էֆ. յայտնի տեսնելով որ ատենագրութիւնը դարձեալ խարդախութիւն դործած է, իրաւունք ունեցաւ ընելու թէ՛ գիւտանը ներկարար եղած է, և ամեն խնդիր և որոշմունք իւր ուղած գունդով կընելու : Կատարութիւն չունիմ այսուհետեւ գիւտանի վերայ : Յիշեալ երեսփոխանը որ գաւառ. ժողովոյ մէջ իւր կարեւոր դիրքով իբր հաւատարիմ վաճառական և պատուաւոր քաղաքացի անստգիւտ վարքով մեծ համարում ստացած է, ցաւելով կ'ընեմք թէ իւր արդարացի յուզմունքն այնչափ մեծ եղաւ, որոյ չկարելով համբերել իւր հրաժարականը տալով ուղեց մեկնել : Թէպէտեւ Մամուրեան պատուելին, որ ներկարարութեան մէջ մեծ մասն ունէր, ետեւէն գուրս ելաւ ու շոյելով ջանաց զինքը համոզել. սակայն անկարելի եղաւ, և իւր հրաժարականը կրկնելով թողուց հեռացաւ : Ժողովը պահ մի լուռ կեցաւ. և գիւտանէն զատ բոլոր ներկայ եղող երեսփոխանք լաւ բղքացին թէ որչափ իրաւացի էր Պ. Պերկամայեան էֆէնտիին ամբաստանութիւնը : Բայց կըցաւ իմք որ գաւառ. ժողովոյ անդամը որքան որ զգայուն սիրտ ունին, այնքան ալ անխօսուն բերան ունին :

Այս կարգէն եկաւ ժառանգական խնդրոյ մէջ ազգ. անտուկին համար տուրք մի որոշելոյն : որ և ընդհ. հաճութեամբ ընդունուեցաւ :

Իսկ բուն խնդիրն, որոյ համար այս օրուան նիստս գումարեցաւ, ուրիշ էր : մի քանի երեսփոխանացմէ զատ ուրիշ և ոչ միոյն մարդէն կ'անցնէր : այն է եպիսկոպոսական խնդիրը : Դիւանը մէջ բերաւ խնդրագիր մի, որոյ ստորագրած էր ինքը և մի քանի անձինք, ընդ ամենը իբր վեց կամ եօթն հոգիք : Խնդրագիրը կար-

հարկաւոր էր յոյժ և ստիպողական : Իսկ հոգաբարձութիւն և պաշտպանութիւն թեմակալ Առաջնորդի միոյ բարձու աստիճանի, զոր չէր անշուշտ հնար յաջորդին՝ ծնունդ և հպատակ Պարսից՝ մարթել յարգ իւնս ածել ըստ պատճառի ըստ պահանջելոյ հարկին : Եթէ կարէր՝ նուազէր ուրեմն նշանաւոր կարեւորութիւն և համբաւ առաջնորդական պաշտամանն որ միշտ և իրաւամբք է ի մեծի համարի եթէ ընդ ժողովուրդսն Հայոց և եթէ առ տիրող ազգն շրջակայ, այլ մանաւանդ յայս Պարսկական իշխանութեցի :

Ժողովուրդք ջուղայու ոչ գեղեցիկին ի ժամաւ տալ զբացայայտութիւն զգայմանց իւրեանց ևս՝ և ոմանք աղաղակաւ, զի ընդդէմ էին նորա երկար և անսովոր ճանապարհորդութեան Առաջնորդին ի Հնդկիս, այլ բարձրագոյն էր հրամանն, և պարտ էր ստորակային պաշտօնէի հպատակել կամաց գերագուծին իւրոյ : Սակայն և այնպէս արժան է խորհել, զի ըստ բարձու իսկ աստիճանի իւրոյ և ըստ պատասխանատու պաշտաման յանձն առնելոյ ի նմանէ՝ չէին Առաջնորդին իրաւունք և ազատութիւն թախանձել ի Սրբազնակատար Հայրապետէն չճշել ի վերայ նորա զիրկին ներհական պաշտօնսն, միոյն պահանջելոյ զանմիջական և զմշտապէս ներկայութիւնն յԱթոռ Ամենափրկչեան վանաց, իսկ միւսոյն տանելոյ զնա ի բաց յաշխարհ հեռաստանեաց ի Նուիրակ Էջմիածնի : Եթէ կալաւ Ն. Սրբազնութիւնն զայսպիսի շաւիղ, այն է աղաչաւոր լինել զհեղափոխ խնայել նմա զերկակի յոյժն, ոչ գիտեմք, բայց գուցէ և նմա ինքեան էր հաճոյ և ցանկալի այն ուղեւորութիւն հայելով ի նա խղճի մտքը իբրեւ զպարտիս հո-

ղացուելով, ոչ ոք համարձակեցաւ դիտողութիւն ընել ի ներկայութեան Նախագահին, որոյ կըլերարեւել խնդիրը : մանաւանդ երբ լսեց նախագահին բերնէն մի քանի ոլորուն բառեր, որով կ'ուզէր յայտնել թէ՛ ժողովը թէ՛ հաճութիւն տայ և թէ չտայ, իւր եպիսկոպոսանալոյ հարցը կատարուած ու անօրինուած խնդիր է : հետեւապէս ժողովը առանց դիտողութիւն ընելոյ վաւերացցաւ սրբազան Պատրիարքի և կրօնական ժողովոյ վկայագիրը : որոյ և մեք յովոլութիւն կրմագրութեմք, իւր արժանաւորութիւնը ճանչելով թէ եկեղեցական հմուտութեամբ և թէ ուսումնական տաղանդով :

ԼՈՅՍ հանդիսի պատուարժան խմբագիրը պատճառ կուտայ մեզ ճշմարտութեան մի արձագանգ լինելոյ կարեւոր խնդրոյ մի լուծում տալով, որ մտայնութեան և անստուգութեան մէջ թողուցած է յիշեալ հանդիսին խմբագիրը : Մեք խնդրոյն ձեռք չզարկած, կըլիւթամք յայտնել Նորին Արժանապատուութեան մեր խորին ու սրտագին շնորհակալութիւնը իւր ջանասիրութեան մասին, զոր ցոյց կուտայ կրօնական խնդրոյ մէջ : և կարծես թէ կեդրոնական կրօնական ժողովոյ բոլոր պարտաւորութիւնն ինքն առանձինն ստանձնած է, որով կըջանայ պաշտպանել ազգային եկեղեցւոյս՝ պահանջները, և հերքել այն մտրութիւններն որոնք կըսպառնան սուրբ կրօնիս և եկեղեցւոյս, և հետեւաբար Հայ ազգայնութեան գոյութեան :

ԼՈՒՍՈՅ յարուցած խնդիրն է՝ Մեքի վերջ կոչուած գրքին հրատարակութեանը մասին, որոյ դէմարդէն մասնական հերքումն ըրած էր իւր մէկ քանի թիւերուն մէջ, և զժողով ևս գիտողութիւն ըրած էր թէ քաղաքիս կրօնական ժողովոյ մէջ ոչ յիշեալ գրքին խնդիրն յուղուած է, ոչ հեղինակն յանդիմանուած և ոչ գոնէ կեդրոնին գիտած է որ պարտաւորապէս նա անօրին էր : Կ'իմանամք այժմ, յիշեալ հանդիսէն, թէ տեղւոյ կրօն. ժողովը պատասխանով մի գոհ և անկասկած ըրած է կեդր. ժողովը, ըսելով թէ՛ յիշեալ գիրքը բնաւ գայթակղութիւն չպատճառելով՝ ինքն ալարժէք տուած չէ բնաւ :

Թող ներքէ մեզ Լ. - ոյ արժ. խմբագիրը գիտողութիւն մի ընել և մեր կարծիքն իմք սխալ է՝ ուղղել տալ : Կ'ասէ թէ տեղւոյ կրօնական ժողովը իւր անբաւականութիւնն զգալով՝ գոնէ

վուարկետական այցելութեան հեռաստան ժողովուրդոց, որ մասն կազմէր և պատկանէր իսկ իւրոյ ամբողջ վիճակին, ոչ գուշակեալ թերեւ Նորին Սրբազնութեան եթէ երկարելոյ է այնչափ բացակայել իւր ի դիւտար և յանմիջական վիճակէ իւրմէ : Իսկ յամենայն գէպս, յորդոր իմն նմա զոր մարթ է ընդունել նկատմամբ և եթէ հոգեւոր օգտակարութեան, և ոչանդ. քան, զի առաջնորդական վիճակն առ որ հաստատեալ էր ի Ձուղա ի Պարսոս, որպէս ասացաք ի վեր : ունի միշտ և հարկաւ զայլ կարեւոր նշանակութիւն և զօրութիւն ոչ իւրիք նուազ պատուական ըստ բարոյական և նիւթական սահմանաց քան թէ՛ զհոգեկանն :

Վեցամեայ պայման բացակայութեան եթէ հարկ անհրաժեշտ կայր ի վերայ բացակայելոյ, բաւական գրէր, կարծեմք, ըստ արդի եղանակի շոգեշարժական ուղեգնացութեան ծովու և ցամաքի հարկանել զայն գործ հովաւագետական այցելութեան : Իսկ եթէ յաւելցին ի նա դարձեալ քանի մի ամիսք, վասնզի կցորդէր այնմ՝ նուիրակութեանն պաշտօն, կազմելով բոլորովին ամբողջ ամ մի, հաւատամք եթէ լի բաւական էր մեծարու Այցելութիւն Նուիրակին ի շրջել ընդ ամենայն քաղաքս Հնդկաստանի ուր գտանին Հայք, և գաւառալանդքէն ի Ձուղա :

Ընդ երկարել բացակայութեան Սրբազնութեան նորա ի նախամեծար Աթոռոյն, ի տիրական վիճակէն, առաւելան իրաւամբ տրտունջք քրթմնջիւն և դժգոհութիւնք համբռն ժողովուրդեան Ձուղայու, և անին արդ օր ըստ օրէ, որ և հանդիսին լի համակրութեանց հեռաստան համագրեաց յաղաքս անխնամ կալոյ մնալոյ

գիտած չէ կեդրոնականին, որ նա պարտաւորապէս անօրին էր : Ձեմք կ'օրող հասկանալ թէ քաղաքի մը թաղի մէջ յանկարծ հրդեհ պատահած ժամ նակ, թաղապետին երթալօրնութիւն պահանջելուն պիտի սպասէ քաղաքապետը կամ ոստիկանութեան գլուխը, որ շտապի գնալ հրդեհը մարել, որպէսզի քաղաքը բոլոր զոհ չլինի կրակին : Այս կընշանակէ արժանապատիւ խմբագրին ասածը : Խմբագրութիւնս սոյն գիրքը հրատարակուելուն անմիջապէս փութաց նորա մասին իւր գիտողութիւնը հրատարակաւ յայտնել և կեդր. կրօնական ժողովոյ և Պատրիարքարանի ուղարկութիւնը հրաւիրելու պարտաւորապէս հոգայ գայ թակղութիւնը վերցընելոյ համար որ արդէն ծագած էր : Սոյն գիտողութիւնը կրկնեցինք : ապեալ գիրքը Պոլիս գնաց, բոլոր լրագիրք փառաւոր տեղ մի շնորհեցին նորա իրենց էջերուն մէջ : միթէ չտեսնէ չիմացաւ կրօնական ժողովը : միթէ չունի նա իրաւասութիւն յանձնէ փութալոյ որեւէ դայ : Թակղութեան մի առաջին առնելոյ, առանց կանխաւ իրեն պաշտօնապէս հաղորդուելոյ ու դարման խնդրելոյ : Այս կէտը մեզ մութ մնացած է : և կ'ուզէինք հասկանալ թէ Պատրիարքարանի և իւր կրօն. ժողովոյ իրաւասութիւնը կրօնական խնդրոց մէջ մինչև որ աստիճան է, և եթէ ինքն իւր անբաւականութիւնն զգացած է, պէտք էր փոխադարձաբար գիտել Մայր Աթոռոյ մեծ Սինօգին, որպէսզի գոնէ նա պարտաւորապէս անօրին էր :

Գալով մեր բուն խնդրոյն, թէ քաղաքիս կրօն. ժողովը ստոյգ է որ յատուկ նամակաւ ցաւ յայտնել է կեդր. կրօն. ժողովոյ ատենին՝ Լ. - ոյ 72 թուով գրածին վերայ : Սոյն կէտն արդարեւ մեր հետաքրքրութիւնն չարժեց : որովհետեւ մեք խիստ լաւ գիտէինք որ տեղւոյ կրօն. ժողովոյ մէջ այդ գրքին խնդիրը յուղուեցաւ ժողովոյն, մանաւանդ թէ ատենապետին կողմանէ, թէ ինչ միջոց գործածելու է ատոր դէմ, և թէ ինչպէս առաջին առնուլ պէտք է գայ թակղութեան : Նախագահին պատասխանէր, «կարեւորութիւն պէտք չէ տալ» : Մի քանի նիստեր ամբողջ գրաւեց սոյն խնդիրը ժողովականաց ուղարկութիւնը, և միշտ միեւնոյն պատասխանն և միեւնոյն վճիռն լսեց Նախագահին բերնէն՝ թէ կարեւորութիւն չիմ տար : Ժողովը խռովեցաւ, չափազանց յուզուեցաւ՝ պետական հարուած համարելով նախագահին վճիռը : հե-

նոցա ընդ երկար առանց Առաջնորդի՝ անգէտ եթէ երբ վերադարձցին Նորին Սրբազնութիւն, մանաւանդ հանապազօրեալ նոցա ի միութեմ եթէ առ ինչ վախճան կամ օգտի հասարակաց տեւէ անդր քան զկարծիս ամենեցուն զկայ առ նուր Սրբազնութեանն ի Կալկաթա : Երեկ գաղտնիք իմն կայանալ անդ՝ անպատկան և անմատոյց հասարակաց գիտութեան . . . : «Գիտութիւն իմն» սակայն, որպէս կալաւ զպատահութիւն ժողովուրդ ոմն նախանձանդիք բարեկարգութեան նկատելոյ ամենայն հեղութեամբ նորին մեծարու Հայրութեան, «որ ըստ «իս բարեւոր էր և պատշաճ իսկ հռչակելառ. ա. «մենայն ոք ի ձեռն իսկ տեղեկագրի ևս և հրոս. «տարակիւ յորադիրս առ ի բառնալ զտրտունջ և և զգայթակղութիւն ի ժողովուրդէն, որը ու. «նին իրաւունս ըստ այժմու լուսաւորեալ դա. «բու պահանջել զամենայն տեղեկութիւնս վա. «բուց և նպատակաց ակնաւոր արանց որ կրկն «զպաշտօն հրատարակական յարաբերութեամբ «ազգային խնդրոց և գործոց : »

Այս զհամբաւի հարաւ աստ՝ եթէ ներկայութիւն սրբազան Առաջնորդին հարկաւոր եղել յոյժ ի Կալկաթա իբրեւ լիակատար Տեղակալ Ն. Սրբազնութեան Կաթողիկոսին ամենայն Հայոց, առ ի պահանջել և ստանալ զգումար իմն կարեւոր յԱթոռն Անդկապոլոյ, որ էր իրաւունք Աթոռոյն Էջմիածնի, այլ ոչինչ ստոյգ զհամբաւոյն եկն ցարդ ի լոյս : Մարթ իսկ է գուրաւոր պատճառ ընդ քրդով ունեւոյ տակալին զպարագայս պահանջիցն, և լուրթեանն պատահելոյ մինչև ցայժմ թեւադրեալ գուր ի խոհակահեղութեան, զոր ոչ անտեղեկալ իրացն կարեցէ

անհաշիւ քաղաքացիաց իւր նիստերը երեք ամսոյ շաբաթ, և այնպէս հետեւ խնդիրն ալ ինքնին խափանեցաւ : Մի կէտն է որ Տեղեկագրին մէջ յիշատակուած չէ, հակառակ կամաց ժողովոյն : Արդ, ինչպէս կը լինի որ այդ ժողովը, որ ի սկզբունքին այնքան ջերմութեամբ ազգային կրօնը պաշտպանել ուզեց և նորա սպառնացող մարտաշարժանքէն դէմ դնելու համար բոլոր ճիգը թափեց, հիմա եւեր նորա հակառակ կը դրէ Կեդրոնին թէ՛ «այդ անարժէք դրօշին վերայ գայտալիզող չկայ» : Երեսնակ ասելու համար Լոսոյ թուոյն մէջ գրուածն երբ կարգացի, գայտալիզացի աեղոյս կրօնական ժողովոյն վերայ և ուղեցի իմանալ թէ ստոյգ է այդպիսի նախադրութիւնը հակառակ իմ կարծեացս, ցաւելով կ'ըսեմ թէ ստորաստիկն եղաւ իմ ընդունած տեղեկութիւնը, բայց առանց օրինաւոր ժողովով որոշելու դրուած է, որովհետեւ անգամայն երկուսը բնաւ տեղեկութիւն չունին նամակէն, հետեւապէս դիւանը ինքնին չկարենալով ճշմանը դէմ դնել և արդէն նորա երկու անգամները իրենց սկզբունքն զոհած, իսկ ատենապետը ըզրոյթին սկզբունքէ զուրկ լինելով՝ համազուեր է իւր ստորագրութիւնը դնել ապօրինաւոր նամակի մի մէջ : Ատենապետի վարմունքը պատիւ կը բերէ կրօնական ժողովոյս, և երկրորդիս սոյնօրինակ ընթացքը պատիւ կ'ընէ տեղոյս հասարակութեան : Tel maître, tel valet.

ՄԵԱԿ պատուական լրագրի 203 թուում կարկէն մեծ Գրիգոր Նիկողոսեանցի կողմէ մի կարեւոր նամակ գրուած կը կարդամք, որոյ մէջ ցաւելով կը յայտնէ անգղիական և ամերիկական վարդապետութեան Հայաստանի մէջ տարածելու համար վերջին ժամանակներս տեսնուած մեծ վայթը : Եթէ ստոյգ է յիշեալ մեծ ապատիւ նամակագրին տուած տեղեկութիւնները, որոյ վերայ չեմք կարող երկրայիլ, թէ Պատրիարքարանի և թէ վեհապալա սրբազան կաթողիկոսի խորին ու շաղկապեալ արժանաւոր խնդիր կը համարուի :

Հետաքրքրական է յիշեալ նամակին մէջ մի ուրիշ երեւոյթ, որ ազգային մեծ նշանակութիւն ունի, և զոր ուրիշ ազգային լրագիրք ոչինչ յիշատակած ունին, այն է այն անգղիական վարդապետութեանը ծաւալման դէմ՝ Կորնոյ սրբազան Յարութիւն արքեպիսկոպոսի և Հայ կաթողիկոս Առաջնորդ Ստեփաննոս սրբազանի

գատել ուղիղ : Մարտ է և Առաջնորդին հրու հպատակ կամաց և պատգամաց Տեառն իւրոյ և Գլխոյն չառնել ի խառնութիւն հռչակելու ինչ զիւրէն, թէ անհաշիւ անթափաչ կացուցանելով զինքն անցյալութեամբն անշուշտ մեծի վշտացման և դայթակալութեան իւրային հօտի . սակայն եթէ ի նմանէ և եթէ ի Սրբազանկատար Հայրապետէն սպասէ այժմ ազգէն անհամբեր լուծանել զայն միջոցութեան . նա զի՝ որ պատկանի Եջմիածնի, որոյ սրբազան կոչման և օգտին՝ մեր ամենեւեցուն են պարտիք կալ միշտ պաշտպան և հաւատարիմ, պատկանի ռազարէն ազգին ընդհանուր և զի ընդ կարի երկար ծածկութիւն այնպիսի նիւթոյ, զոր մարտ է համարել ազգային կամ հասարակաց, կարէ մնաս դործել և բարոյ յապէս, զոր նոյն օրէնք խոհեմութեան որ ապսպարէր ծածկութիւն, պահանջեն արգելել կամ բառնալ :

Ծանրացաւ և ևս անբաւականութիւն ժողովրդոց Զուղայու, այն զի զգացեալ նոյա զկարօտութիւն և զպէտս Հովուին բայակայելոյ ի նոցունց անասման պայմանաւ, մատուցին առնեալ Նորին վեհ Սրբազանութեան յէջմիածնի առաքել նոյա զայլ ոք յԱռաջնորդ Զուղայու . և լուծմբ, (զի չեմք տեսնալ զթղթակցութիւնն,) եթէ Նորին Օծութիւն ոչ միայն չեղև ունկնդիր աղաչանոց նոյա, այլ ցոյց մեծ տհաճութիւն յաղագս համարձակութեանն դիմելոյ նմա այնպիսի առաջարկութեամբ : Եթէ ուղիղ է այս, զարմանամք և տխրիմք . քանզի տպաւորեալ եմք եթէ պատշաճ էր յաւատ դրել ժողովրդոց ի պատասխանի զհայրագութեանս միջնորդութեան և քաջալերութեան եթէ անյար-

միանալը Գրիգոր Էֆէնտի Շապանեանի միջոցաւ . և կարեւորութիւն ունեցող մի քանի քաղաքացի մէջ ազգային հաստատութիւններ, այն է լարան, դարոց, արհեստանոց և այլն կառուցանելու համար թափած ճգունքը : Սոյն տեղեկութիւնները, որոնք զարմանաց և դժուարաց տրտման են, մեր սրտերը խանդաղատանօք կը լեցնեն, և ճգտումն կուտան մեզ ձեռք երկարելու և դործակցելու այսպիսի նուիրական և սրբազան աշխատութեան . որոյ վերայ կը հրաւիրուիմք նաև մեր քաղաքակից թմբեալ երիտասարդութեան ուշադրութիւնը :

Ահաւասիկ յիշեալ նամակը : Առաջնութեամբ նամակիս մէջ մի քանի խօսքով ցոյց տուի այն անգունը, որ բացվում է հայութեան համար անգղիական և ամերիկական վարդապետների կողմից . այժմ կրկին ևս կը խօսեմ այդ վտանգի վրա, որը արդէն խիստ զգալի է դառնում այստեղ հայրի համար : Օրից օր աւելանում է ամեն տեղ քարոզչներ թիւը, օրից օր բացվում նոր բաժանումներ նոյա ընկերութիւններին, օրից օր աւելի յաջողութեամբ տարածվում նոյա մտորեցուցիչ աղբյուրները և այդպիսով աւելի և աւելի հաստատում է ամբողջ այն շարեաց հիմքը, որ տալում է անմիաբանութիւն, իսկ և անհաշիւ թիւ, և ո՛ր, այն ազգի մէջ, որին փրկող միայն պիտի լինի սէր, միութիւն և կապ : Եւ ինչ են մտածում ազգի բարեբաւերները, էլ ինչո՞ւ են սպասում մեր դործիչները, որ օրվայ համար պահում իրանց փողը, զրից և գիտութիւնը : Միթէ բոլորն էլ անտարբեր են . . . ո՛հ, լեզու չէ դտնում այդ պնդելու, իսկ եթէ ո՛չ ինչո՞ւ են լուռ, լուռ մի ճղճափալն, երբ մեր թշնամիները կարող են անբռնելի վերքեր հասցնել ազգին, որի համար նորա հանգիստում են այժմ միակ և լուսազոյն բարեկամ, վասնզի տղքատներին օգնում են փողով, գիւղացոյ սերմով, հիւանդներին դեղով, մանուկներին դպրոցներով, վատտոյներին քաջաբերով, վատահերին վայրկայեղով, իսկ հարուստներին շողորթներով և քաղաքական աղբյուրներով, և այլ ամեն զատարումն իրանց ենեղ նպատակին հասնելու համար, այն է տարածելու անգղիական եկեղեցու վարդապետութիւնը և այդպիսով խաւարելու մեր ազգի նորափայլ աստղը : Երբդուք սարսում է այս գործիչից և չգիտէ հնարք աղէտի առաջը առնելու համար, վասնորոյ նորա աչքը մղած է դէպի այն հայրենակիցները, որոնք ապրելով վարժամ ապարանքների մէջ՝ որը մի անգամ դոնէ յիշում են, որ իրանք ևս հայ են . . . Եւ թէպէտ մինչև այժմ Հայաստանը ո՛չ մի կողմից չէ ստանում ոչինչ խրախոյս, բայց ինքն Երբդու գիտ չէ վատվում, ալ հաւաքում է բոլոր իր այժմ թշնամաց հետ մարտելու :

մարդատեալ զիջանել ընդ խնդիր նոյա : Հարկ չէ նկատել, զի կամք և ցանկութիւն ժողովրդեան որ կայ յամենայն ազգս և յազինս դարուս այսորիկ ընդ ամենայն ծագս աշխարհի, չգրի առ ոչինչ առաջի ի խնամաց և թագաւորաց անգամ, այլ արժանի լինի մեծի ուշադրութեան և ակնածութեան յօգոստափառ անձանց ևս և անքաղաքակիրթ Պետութեանց . ուստի որքան առաւել արժանի իցէ ակնկալել ի բարեգութ մարդասիրութեան և յերկայնմութեան մեծի պաշտօնէից Տեառն խաղաղութեան և հեղութեան :

Ի վախճան խոնարհ դիտողութեանց մերոց, զոր պարզութեամբ սրտի և բարեմտութեամբ բուռն հարաք մատուցանել, վատահիմք առնել և զհարցն՝ եթէ չէր հնար, թերեւս առաւել դիւրին և աշողակ, զմի ի բաւական թուոյ ոք բանուէր Միաբանիցն Էջմիածնի կարգել ի նըւիրակ փոխանակ ձգելոյ զայն հրեշտակութիւն Առաջնորդին Զուղայու . մանաւանդ զի երեւի կայր կցորդեալ այնմիկ և կարեւոր խնդիրն դործական, որում պիտոյ էր երկար ժամանակ և ուշադրութիւն ի դուրս հանել, այն է զգրամական իրաւունս Էջմիածնի յԱտենէն Անգղիացոց : Յայտմ մասին ոչ կարէ ոք ուրանալ զի գովելի է և պատուական ջանքն և եղիցի միշտ ի հանգուակ խնդիրս . վասնզի եթէ ոչ ջանասցէ Ս. Աթոռն հասանել դոնէ պատահական իրաւանց նպաստեց, յոր այլ հաստատուն աղբերէ կարիցէ հոգալ փեր զմիսս ազգային մեծի այն հաստատութեան զոր կառավարէ, և որ ի սաւորապէս երեւցուցանէ զգոյնութիւն Հայապիւն . և ուստի մարտասցէ հոգալ զմիսս

համար, նա բանում է լարաններ, տպագրատուն, թատրոն, լրագիր, ուսումնարան և կապում նոր միութեան դաշինք, ինչպէս որ կայացաւ երէկ երկու հնամայն յիսկիմ կողմերի մէջ՝ կաթողիկ և լուսաւորչական հայրի : Այդ նշանաւոր իրողութիւնը, որ կատարվեց մեծապատիւ Գրիգոր Էֆէնտի Շապանեանի տանը, արդէն տպացուցանում է՝ որ աստիճան ուժեղ է ընդհանուր թշնամին : Ինքը Գրիգոր Էֆ. հանգիստում էր միայնող օղակ երկու հաստ շղթաների մէջ, որ ձեւացնում էին երկու դաւանութեանց եսկիսկոպոսները իրանց երեկեայ հետ : Յարութիւն և Ստեփաննոս սրբազանները խօսեցին շատ խելացի և տղոտ խօսքեր, որոնցից շարժված մի քանիսները արտասովում էին և գրկում միմեանց : Թող աստուած պիտի է նրան ու պստահետ պատճառ կը լինի որ և իցէ խորագիտութեան, ասում էր մէկը, թող Աստուծոյ Մեհրոբեան կոչեն նորան . ու պստահետ ազգութեան հարցի մէջ մի մաղի չափ անտարբերութիւն ցոյց կը տայ կրօնի խորութեան պատճառով, ասում էր միւսը, թող Ահաբեկ արգանի և Աղարեւի հոգին լինի միշտ քաջալեր և վկայ մեր միութեան, աղաղակում էր երրորդը . ամէն ամէն կու չում էին ամենքը : Ժողովը ցրվեց կէս գիշերին՝ երկարորէն խորհրդակցելով այն միջոցների վրայ, որ անմիջապէս հարկաւոր էր ձեռք առնել ազգի շահերը պաշտպանելու համար : Միւս առաւօտ Ստեփաննոս և օրինապատը կարեւոր գործի համար ուղեորեց դէպի Արարածնելով իր հօտը Յարութիւն արքեպիսկոպոսին, որ մինչև այժմ կրկնված երկուցի չէ : Եւ ինչ է մնում մեզ պատահեաւ՝ մեզ մնում է շուտ կատարել այն ինչ մտածումնեց, և չուտով իրագործել ինչ խօսում ենք, այսինքն, Մո. շ. Վան, Գիարբեքի, Երբդու և բոլոր Հայաստանի քաղաքներում հիմնել լարաններ, դպրոցներ, գեղանոցներ, արհեստանոցներ, առևտրական և ուսումնական ընկերութիւններ և ամեն տեսակ հաստատութիւններ, որոնցով կարելի է աղաւել ժողովրդին Անդլիոյ բարոյական և նիւթական հարստահարութիւնը և տիրապետութիւնը : Այս ամենին մեր տէրութիւնը ևս կը լինի միշտ աջակից, որովհետեւ նորա քաղաքականութիւնը պահանջում է ընդգիմադրութիւն Անգլիայի աղբյուրներն Հայաստանում և այդ աջակցութիւնը արդէն յայտնվում՝ Երբդուի հիւսիսատուութիւնը ընդհանուր հիւսիսատուութեան փոխելով, իսկ Վան հիմնելով նոր հիւսիսատուութիւն . մնում է միայն ցանկալ որ մեր տէրութիւնը Մո. շ. Գիարբեքի շուտով հաստատէր զխլովմադիկական գործակատարներ, ինչպէս այդ ենթադրվում է, և այն անհրաժեշտ պայմանով որ այդ պաշտօնների գոնէ մէկը մէջ անշուշտ դտնի հայ, որը իր ազգեցութեամբ կարող է մեծ օգուտ բերել Առաստառների շահերին և մնաս Անգլիայի :

վարժարանաց, զոր ամենայն ոք ակնկալէ բարգաւաճել ընդ յատուկ խնամատարութեամբ կաթողիկոսին, առանց ճշտիւ ի հաշիւ առնելու զհարկաւոր ծախսն :

Չէ անպատեհ ի վայրկենիս խոստովանել դու չութեամբ և երախտագէտ զգացմամբ, զի Նորին Սրբազանութիւնն, որ այժմ նստի յԱթոռ Հայրապետութեան, արարեալ է շատ վասն վարժարանաց և ճգնի դարձեալ առնել, այլ զանհնարիցն չկարէ բուռն հարկանել, միայն եթէ ի թիկունս հասանիցեն նմա ազգաւորք յամենայն կողմանց :

Սրբազան Հայր Գրիգորիս Առաջնորդն յայցելութեան իւրում աստ իբր երկու ամօք յառաջ, արար դարժանաւոր առաջարկութիւնս յօգուտ նախ դպրոցաց Զուղայու, ապա նորա կառոյց ամենապատուական վարժարանին Էջմիածնի, այն է զի բարեհաճ գտնին ազգայինք աստ տարածել առ նոսա տարեւոր օրնականութիւն ի բազմաւատ արդեանց ստացուածոց պատկանելոց ուսումնարանի տեղոյս : Համաձայն եղև Ն. Սրբազանութեան յամենայն սրտէ և գրիչ սորին, զի ԲԱՐԻ և ՕԳՏԱԿԱՐ էին ասալեալ առաջարկութիւնն և ի սահմանի հնաւորութեան և դիւրին իսկ ի կատարումն, այլ եղև ընդգիմալութիւն ոմանց, և ոչ Առաջնորդն և ոչ կուսակից նորա ցանկացան յերեսս հակառակութեան ընթանալ ի խնդրին, թողլով վերին Տեսչութեան կամիլ անօրինել որպէս և երբ ամենախնամ և ամենատես Աշացն բարի թուիցի :

Ա. Բեպիկ, 31 Հոկտ. 1878:

Ի Բանասիրականին ունին տեսնել ընթերցողը զերկար յօգուած մի առաքեալ առ մեզ ի կողմանէ յարգոյ թղթակցի մերոյ որ ի Բթա վիա խնդրանօք հրատարակելոյ ի լրագրիս : Պաշտօն խմբագրութեանս, որ պահանջէ յամենայնի և առ ամենայն ոք անաչառապէս վարել անկողնակալ ոգով, պարտաւորեաց զմեզ յարգել զկամս և զխնդիր թղթակցին մերոյ, որ համարի անշուշտ յանձն իւր ունել իրաւունս ըստ յատուկ եղանակի խորհելոյ իւրոյ, առանց թերեւ կարող լինելոյ ըմբռնել և զեղանակ մտածութեան վեհ, սրբադան կաթողիկոսին, յորում կայանայ նորին իրաւունք թէ յընտրութեան ի նուիրակութիւն զգեր. Գրիգորիս սրբազան արքեպիսկոպոսն, և թէ ի պահելգաղտ զխնդիրն դրամական իրաւանց յԱտենէն Անգղիացոց : Թերեւ նորին վեհ. Սրբազնութիւնն յետ յաջողելոյ զստացումն յիշեալ դրամոյ, տացէ հրատարակել յԱրարատ ամառգրի Ս. Աթոռոյն, որպէս արարեալ ունի յայս օրինակ յայլ դէպս, ի ծանօթութիւն բերել ընդհաւ Ազգին՝ որ ինչ գիտութեան նորին պատկանի :

Մահտեսի Եագուպ Եֆէնտի Տայիւսան, պատուաւոր քաղաքացի, երբեմն վաճառական և արդ իւր գործերէն դադարած՝ իտարէի ժողովոյն մէջ անդամակցութեան պաշտօն կրկնելու, և ազգային դաւառական ժողովոյ ևս անդամն էր և իւր ազգասէր ու կրօնասէր վարքովը հասարակութեան յարգն ստացած, շատոնց ի վեր շնորհակցութեան արտաքին վարակեալ և վերջին օրերս սաստկանալով՝ առ Աստուած վստահեցաւ ի հասակի 56 ամաց, մեծ ու խորին սգոյ և կարեկցութեան արժանի վիճակի մէջ թողնել իւր բազմաթիւ բնականքը : Յուշարկաւորութեան հանգէսը կատարեցաւ ամսոյս 18ին քաղաքական և կրօնական շքով :

Ե Ռ Ե Կ

Կարուակ ոմն աղատեալ յաշխարհային հոգոց և ի շեղումն ինչ, մատեալ առ դուռն արքայութեան Եհարց ցնա սուրբն Պետրոս թէ կացեալ էր ի քաւարանի : «—Ո՛հ, ասէ կարուակըն, սակայն ամուսնացեալ եմ :—Շատ է այդ, ասէ Առաքեալն :» և բացեալ զգուռն՝ եմոյժ զնա ի ներքս : Յետ ոչ բազմաց եկն անդ և աբեղայ ոմն, որ ձայն տայր բանալ ինքեան ըզդուռն : Սակայն սուրբն Պետրոս Եհարց ի ներքուստ, եթէ կացեալ էր ի քաւարանի : «—Ո՛հ, ասէ արեղայն, բայց զիարդ կարուակն այն որ չէր կացեալ նոյնպէս ի քաւարանի, եզիտ անդըր մուտ :—Քանզի ամուսնացեալ էր նա, ասէ Առաքեալն :—Բարէ, դուեաց այրն, եթէ նա մի անգամ և եթ ամուսնացեալ է, ևս բազմիցս ամուսնացայ :—Եթ ի բաց ուրեմն վաղվադակի, գուցեաց Պետրոս, զի արքայութիւնն չէ տեղի մոլեղնելոց : »

ՔԱՆԱՔԱՆ ԽԱՐԻՔԻ

Զմիռնիա, 23 Գեկտեմբեր

Հեղեղանման անձրեւէն յետոյ օգը սկսաւ պարզիլ պայծառ արեգակով և միջակ ցրտութեամբ. երկրագործաց դասն ուրախ են, և կը յուսամք թէ յաջողութեամբ կը պատկուին իրենց աշխարհօգուտ վաստակները :

—Անցեալ շաբթու արիւնահեղ պատահում մի տեղի ունեցաւ երեւոյթաց գնդի և մի քանի զապիւնիէն մէջ, որոնք Մանիսայու Մութասարըֆին կողմէ զրկուած էին զանոնք ձեգբակաւելոյ փաշաքէջիւ և Սարը—Չամ ըսուած գեղերուն մէջտեղ : Երեւակներն էին իւր 20 անձինք, զուլս ունենալով իրենց երեք նշանաւոր երեւակապեաներ, փիճ Օսման, ինճէ Հիւսէին և ֆէհիւլան : Իսկ զապիւնիէք 30ի չափ հարիւրապետի մի հրամանատարութեան տակ : Առաջիններն որ լաւ սպառազինեալ էին և յաջողակ ի հրաձգութեան, որոնք անմիջապէս 3 ձի և 3 հողի սպաններով, 7—8 հողի ևս վերաւորելով վերջ տուին կռուոյն : Սոյն եղեւութեան վերայ

անմիջապէս ոստիկանապետ Եսաիմ—Պէյ զրկուեցաւ 200 զօրաց խմբով և 10 սուարիով երթալ երեւակաց դուռը պաշարելոյ. բայց անոնք արդէն իրենց ապահովութիւնը գտած էին :

—Մի քանի մանր գողութիւններ և յախշտակութիւններ տեղի ունեցած են, բայց առանց արժանի լինելոյ նշանակութեան :

—Անցեալ շաբթու հայազգի տիկին մի հրեշտակ մանուկ մի ծնաւ յաղթանդամ մարմնով և ճակտին վերայ ունելով աչքերը : Բարեբաղդարար մեռած էր և հետեւապէս առանց բնագիտաց հետաքրքրութեան եղեւարկելոյ, անմիջապէս պարտէկեցաւ :

—Գաւառ. Ժողովոյ վերջին նստին վերայ ետքէն ստացած տեղեկութիւններէ կ'իմանամք որ մեծ Պողոս Եֆէնտի Պերկամալեանի ժողովէն հեռանալովը՝ նիստը իւր մեծամասնութիւնն կուրսած է. հետեւեալս եղած որոշումներն ըստ Մահմանադրութեան անվաւեր են :

—Քաղաքէս 6 Ժամ հեռու Նիմֆ տաղը ըսուած գիւղին մէջ զրկուած գաղթական ընտանիք խաղաղութեամբ և ամենայն կանոնաւորութեամբ տեղաւորուել են հաստատուն կերպիւ, ինչպէս կը վկայեն եկող գիւղացիք : Կըսուի թէ սոյն գիւղը յանուն վեհափառ Սալմանին Համիտ կամ Համիտիէ պիտի կոչուի այսուհետեւ :

—Քաղաքիս գաղթական գաղթականութիւնը նոր տարւոյս բարեկարգեալ առթիւը հիւպատոսարանի մեծ սրահներուն մէջ ժողովուած լինելով նախագահութեամբ մեծ հիւպատոս Պ. Բէիսիէն տը Բէյնտի, խնդիր ծագեցաւ և համահաճութեամբ ընդունեցաւ, այն է Մարդասիրական ընկերութիւն մի հաստատել ի վերայ հիմանց նոյն օրինակ ընկերութեան որ քանի տարիէ ի վեր կազմուած է Կ. Պոլսոյ մէջ, որոյ մասնաւոր նպատակն է օգնել ճանապարհորդաց և անգործ մշակաց որոնք իրենց երկիրը դառնալ կը փափաքին : Յիշեալ ընկերութիւնը ընդ պաշտպանութեամբ մեծ հիւպատոսին սկիզբն տուաւ գործողութեան ի 1 Յունվարի (Ն. Տ.) նախագահ ունելով իրեն Պ. Օ. Բըսէյլ և փոխտեսի նախագահի զՊ. Շառլը Տառանդ :

—Մանչեսթէրի նախորդ քարոզիչ Փիլիպպէս Եան արժաւ. Գիտնդ փորդ ապետը երէկ հասաւ ի քաղաքս, և ինչեանցաւ ի տան վսեմ. Եագուպ Եֆէնտի Սպարգալեանի :

Մեծ—Եպարդոսի հրամանաւ Տօքթօր Սէրփիլէն Եֆէնտիի նախագահութեամբ յանձնաժողով մի կազմուել է, որոյ պաշտօնն է՝ մայրաքաղաքի բանտերն աչքէ անցնելով՝ անոնց վիճակին վերայ իւր տեղեկագիրքը շինել, որպէս զի առողջապահական կանոնի պահանջած անօրէնութիւններն ի գործ դրուին :

—Արդարութեան գործոց խորհրդական Վահան Եֆէնտիի նախագահութեամբ ևս ուրիշ յանձնաժողով կազմուել է Նաբոլէոնի օրինակով հետեւողութեամբ թուրքիոյ համար պատժական նոր օրինադիրք մի պատրաստելոյ : Սոյն օրինաց ծրագիրները օսմանեան խորհրդարանի քննութեան և քուէարկութեան պիտի ենթարկուին, կ'ըսէ վագըթ :

—Ամեն սրբազան Պատրիարքը փութացել է իւր ցաւակցութիւնը յայտնել Անգղիոյ դեսպան Ս. Լայարտի վասն մահուան Ալիս իշխանուհւոյն, որ վիկտորիա վեհ. Թագուհւոյն երկրորդ դուստրն էր :

—Դահլիշի մէջ Ապետտին կոչուած արքունիքն հրդեհ պատահելով, կանանոցին մեծ մասը հրոյ ճարակ եղել է :

—Սուրբ Էջմիածնի Արարապա Հոկոթ իտոյն մէջ կը կարգաւթ թէ, Մանչեսթէրի Հայոց արժ. Առաջնորդ Ղեւոնդ վարդապետ փրկալէմեան պաշտօնէ հրաժարուելով և տեղոյն ժողովրդեան խնդրանաց համեմատ նորա տեղ սուրբ Աթոռոյ կառավարութիւնը հոգեւոր հովիւ կարգել է զարժ. Խաչի վարդ. Աստուածատրեանց :

—Կարնիէն ֆուշ լրագրին գրուած նամակ մի կը ծանուցանէ, թէ յիշեալ քաղաքին մէջ զինուորական ատեան բացուած լինելով ընդ նախագահութեամբ Ֆէրիք Մուսայ փաշայի, տեղոյն Ս. Առաջնորդը շնորհակալան գիր ուղար

կած է շրջակայ գիւղերը, յայտարարելով թէ, ով որ տաճկաց կողմանէ զրկանք ու հարստահարութիւն կրած է, և բողոք ունի, երթալ յիշեալ ատենին յատուկ խնդրագրով մատուցանէ, որ պատրաստ է ամեն դատ մոտիկ ընել և արդարութեամբ պատժել յանցաւորները, և հարստահարելոց իրաւունք տեղը բերել :

—Դարձեալ կարնիէն գրուած նամակներէ ուրախութեամբ կ'իմանամք որ Ալաշկերտէն գաղթող ընտանիք սկսած են քիչ քիչ յետ դառնալ իրենց հայրենիքը. արդէն 60 տուն դարձած են իւրաքանչիւրն իւր գիւղը, և շուրհիւ Միւթեարքի Եուսուֆ փաշայի իրենց անբը կրկին մտեր տեղաւորուել են : Սոյն ազգասիրական և մարդասիրական մեծ գործոյն հեղինակ հանդիսացած են վսե. Յ. Լազարէֆ, Գրիգորիս եպիսկոպոս Աղուանեան, Կ. Կամարական և Գրի. Նիկողայոսեան. այլև մեծապէս օգնած է տեղոյն Առաջնորդ Բարեշնորհ Գովհաննէս վարդապետ, որոց բոլորին անունները գրուած պէտք է լինին ազգային պատմութեան մէջ :

—Ձէյթունցի բանտարկելոց աղատութեան մասին նոյն լրագրին մէջ կը կարդամք :

«Հալէպի մէջ բանտարկեալ Ձէյթունցի ազգայինք արձակուել են ամսոյս 4ին, և կուսակալն 16 000 զօրուշ ճանապարհի ծախք տուել է անոնց՝ Ձէյթուն վերադառնալու համար : Կը յուսացուի թէ, Մարաշի մէջ բանտարկելոց աղատութեան լուրը այսօր կամ վաղը կուգայ, և մայրաքաղաքիս մէջ բանտարկեալք ալ Պատրիարքարանի կը յանձնուին : Անգղիական դեսպանատան առաջին քարտուղարն երէկ առաւ այս ծանօթութիւնները հաղորդել Երաւ. Բարեքարանի թարգման Չէրաղ Էֆէնտիի, որ գեսպանատունը գացած էր Ս. Պատրիարք Հոգեւորմանէ, քարտուղարին հետ տեսնուելու համար : Նոյն ինքն գեսպանն ալ անցեալ շաբթու զգեր. Միկրեան ընդունած ատեն, յոյս տուել է մօտեւս ամեն կողմ ժամտարմաներ հաստատուելուն և բարեկարգութիւն ի գործ դրուելու :

Հալէպի անդ. հիւպատոսը, որոյ ձեռք եղած է աղատութիւնը, յետ այնորիկ ի Մարաշ եկած է այնտեղի բանտարկեալներն ևս ազատելոյ համար, որ արդէն ի գործ դրուած կ'երևի :

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

Աֆիւն. մեր վերջին թիւէն յետոյ զինքը թուրացած և ցածնալու հակամէտ են. բոլոր ծախսն են 30 կողով. որոց 20ը Գարահիսար՝ 128 դահեկանի, 5 կողով զանազան տեսակ 132 1/2ի և 1 կողով Չալը կոչուած 134 դահեկանի չէքնի : Պատրաստի ապրանք կան 2876 կողով :

ԾԱՆՈԹՅՈՒՄ

ՎԻՔԹՕՐ ԻԿԿՕ

ՊԱՊ

Հոգակաւոր բանաստեղծին սոյն վերջին ընտիր գործը՝ Պ. Յ. Կ. Սըվաճեան դիւրբմեղեքի ոճով հայերէն լեզուի փոխադրած ըլլալով՝ այժմ մամլոյ տակ կը գտնուի : Հրատարակութիւնը դիւրացնելու համար հարկ եղաւ բաժանորդագրութիւն մը բանալ, մեն մի օրինակին 4 դրուշ ցին սահմանելով : Գարծը հրատարակուելէ ետքը 1) 4 մեծիտի պիտի ծախուի : Փափաքողք կրնան օգտու քաղէ 3. Բարեկեանի դիմելով՝ որոնք քով կը գտնուի բաժանորդագրութեան ցանկը :

ՆՈՐ ԸՆԹԵՐՑԱՐԵՆ

Տղայոց վարժարան համար մօտ տարիներուս միջ հեղինակուած դասագրքերուն ամենէն կանոնաւորն ու օգտակարն է : Տեսեան տպարանէ ի յոյս ընծայուած հեղինակութեամբ Մամուրեան Պ. Մատթոս պատուելոյ, և հետեւողութեամբ անգղիացի Չեմպլըսի կրթական ընթացք ըսուած մեկ գործոյն :

Գրեն և մեկ ֆրանք :

Տէր Լրագրոյս,

Գ. Լ. Կ. Պ. Պաշտպան :

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՐՇԱՆՈՅՍԱՌ ԱՐԱՐՈՏԵԱՆ